Նախագիծ 25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

__ ____ 2011 -Ն

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 19-րդ հոդվածով, 20-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, ինչպես նաև նկատի ունենալով ՀՀ կառավարության 2008թ.-ի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշման հավելվածի <<Ջրագրական հուշարձաններ>> բաժնի 6-րդ կետի և ՀՀ կառավարության 2001թ.-ի հունվարի 17-ի N 30 որոշման պահանջները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N 1501-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծ Պառնու գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում պետական սեփականություն հանդիսացող էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նշանակության մեկ հեկտար հողերը փոխադրել հատուկ պահպանվող տարածքների՝ բնապահպանական նշանակության հողերի կատեգորիա,
2. ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարին՝ 5-օրյա ժամկետում ապահովել ՀՀ կառավարության 2001թ.-ի հունվարի 17-ի N 30 որոշմամբ սահմանված հողամասի նպատակային նշանակության փոփոխման ընթացակարգի համար անհրաժեշտ համապատասխան եզրակացությունները, կարծիքները և փաստաթղթերը,

3. ՀՀ բնապահպանության նախարարին, էներգետիկայի և բնական պաշարների նախարարին և առաջարկել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10 օրյա ժամկետում ընդունել սույն որոշումից բխող անհրաժեշտ իրավական ակտեր,
4. ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 1-օրյա ժամկետում հողային ֆոնդում կատարել անհրաժեշտ գրանցումները,
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ՀՀ կառավարության 2001թ.-ի հունվարի 17-ի N 30 որոշմամբ սահմանված համապատասխան եզրակացությունները, կարծիքները և փաստաթղթերն ապահովելուց ու ՀՀ կառավարության աշխատակազմ մուտքագրվելուց հետո: